Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Ապրիլ 25-ին. Թիֆլիս. №17.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

*Ի յիշատակ կոտորածների անցեալում, ներկայիս և ապագայում*




Ո՞Վ ՉԷ ՀԱՅԻՆ ԿՈՏՈՐՈՒՄ




Քերքում (Անդրկասպեան երկիր) ծնւեց (հիմնւեց) և երեք օրից յետոյ մեռաւ (փակւեց) Հասարակական Ժողովարանը, խորը վիշտ պատճառելով տեղի հասարակութեան.

Աստուած հոգին լուսաւորէ, Թաղողներին կեանք նւիրէ։




Գարնան կանացի շլեապաների սեզօնին

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մոսկովսկայա փ. № 19
Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“։
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.
Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ՀԱՅԵՐՈՒՆ ԿՈՏՈՐՈՒՄ ԻՆ

Ադանում, Դիէրբէքիրում, Զէյթունում, Մուժամբարում հայերուն կոտորում ին կօսէ։

Ստամբօլում՝ շվէյցրներուն, խօջաներուն ու սէյիդներուն բոմբիր ին ուփ, բուշէքումը շաղ տալու համա, մինկը հայերուս վրէն գցելու ու իժում էլ Մարմարայ ծովը հայ արնով ներկելու։

Էս էսօր ու էրեգ։

Շատ վուխտ է անցի, ինչ հայ արին էր վինթւում, էսափ Թիփլիզում, Բաքւում, Նախչևնում, Երևնում ու Գանջում, Շուշումն ու Զանգեզուրմում։

Զէ, էտ էլ թէ էրեգ չէր, շատ էլ վաղ չէր. ջէր էլի նշաննիրը կան, ջէր էլի արտասունքը չէ ցամքի աչքներեմէն, անմեղ թաղածներու գերեզմաներուն մամուռ չէ պատի։

Ու ետրար կայ մէ տիղ ու մէ հայ, վուր ինքն իրան չասի թէ՝ սխար ինչ մինկ իմ գուրծի, ում աչքն իմ հանի, ինչ իմ արի, վուր ինձ էն սխալուրս պանում ին, տուննս ու դուքանս, կալըս ու մարաքս, մալս ու բաղս էրում, հրի ճարակ շինում։

Զէ, չկայ մէ հայ ու վուչ մէ տիղ՝ վուր էտենց չասի։

Համա կայ մէ էնթասուր հայ էլ, վուր սիրտը դաղէդաղ էկած չի, սասայ ուրիշ եաղ դուշմաններեմէն իրա հալալ ախպուրիցն էլ. ախպուրիցը՝ վուր իրան իրան համ տէր ու պաշտպան, համ էլ դէլ ու գազան, պատիժ ու պատուհաս է դառնում իր պաշտպանածի, իրան ապաստանածի, իրան սիրածի համա ու տաքցրածի գլխին։

Զէ, էս թասուր հայ էլ չկայ։

Միր սակուաթար կորեսպոնդենտ ու կոնցուլ Պօլէտիկուսը, անցած Խաթաբալի № 16-ում, Արշակ Արութինովի բերնով, հարցնում է ինձ՝ Գասպար ադա Կալատուզովիցս, «տես կօսէ դակօնները, թէ ինչի ին հայերուն սպանում, ջարթում, գփում կօսէ ու վուր սատում ին, թէ միթամ հայեր» էլ կոտորիլ ին, թուրքերուն, էտ կօսէ դուրթ է, ան դուրթ կօւլի, կօսէ»։

Էս թասուր բան իմանալու համա, էս բանի մեզեդնիրը գթնելու խաթրու ու միր հաւատարիմ կոնցուլ ու ննգիր Պօլէտիկուսին էլ ջուղաբ տալու համա, զօռըս գլուխ է հարգաւուր։

Ես խօ Բալանթարը չիմ, վուր ամեն թասուր բանի վրէն, մէ առաջնուրթող թխիմ, մածունը շիլափլաւ շինիմ, կաթն էլ արաժան։

Ես խօ «Գուրծի» մինձ մինձ պօլիտիկուրի խմբագրներից չիմ, վուր էսոր էս սախիմ, էքուց էն՝ ու վուչ մէ օր էլ մէ օրինաւուրթան չասիմ. տիրացու տիղով կօսմօպօլիտ լուսննգնիմ, արդա ուրդա բանիր գրիմ, խմբագրատան նամակնիր թխիմ. տակը անայտ ու անչիք անումնիր շարիմ, մարթկութինը Օսմանլի սուլթնի ճանգերեմէն ազատիմ։

Ես խօ «Հավիւ» գաղէթի խմբագրրներից չիմ, վուր դուրծով ուրիշ ըլիմ, խուսկով ուրիշ սախիմ, սիւ սրտիս մէջ սիպտակ հոքի դնիմ, Աւետրանի խուսքիրը սարփի վրէն հասկանամ ու սախիմ, թէ՝ ինչ ես իմ անում, լաւ իմ անում. ու ինչ դուք իք անում, եանդլիշ իք, կօսէ, չունքի դուք Աստուծեմէն ըսնածնիր չիք, կօսէ։

Միր կոնցուլ Պօլէտիկուսը հալրաթտան, ինչ վուր էտ բանը գրում էր Ստամբօլեմէն—սպասում կուլի, վուր էնենց մէ ջուղար տամ, վուր դուրթ վուր օրինաւուր ըլի։

Ինչի ին հայերուն կոտորում։

Աստուծ վուչ գիդի էն մարթու գլուխը, վուր իմացել է, թէ հայերուն կոտորում ին ու չի բեզարաց ըլի.

Էն հայու գլուխը, վուր իմանալով էտ բանը, էնչախնեեթ թէ վուր կանար ոտքի վուղով, թէ խուսկով, չէ ոտքի։

Էն հայ դոխտուրներու գլուխը, վուր կանային ու պիտի բոլոր գուրծիրը թողնէյին ու ինչ օր վուր լսեցին, թէ հայերուն կոտորիլ ին, չը հաւաքեցան մէ էրկու դուժին դոխտրնիր չը դրգեցին Ադանա ու Զէյթուն, ոտկելու խիղճ ու կրակ վիրաւուրներուն։

Էն ատվակատներուն, վուր էսափ, բուլվրի վրեն, օր ու գիշեր թրև ին գալիս, աղէնանիր ին պահում, թէ մէ կլաուդնի գուրծ գթնին, մէ քանի շայի դուս գծլին իրենց կլիէնտներեմէն ու իմանալով. թէ էտենց բանիր է էլի, էնչախնեեթ ճամփու չելան, չգնացին Ստամբօլ, Եւրոպա, աշխրքի արթալադատութեննին իմաց չարին էն անօրէնութիւննիրը, վուր սուսայ Սուլթան Աբդուլ Համիդիցը, ջէր էլի ուրիշնիրն էլ պակաս օյինբազութիւննիր ու լրփութիւննիր չին անում։

Էն ինժինէրնիրու՝ վուր գիշեր ցերեկ էն ին փնտրում. թէ անակրիք մէ պատու ոփեերի կնիկ ուզին, թաք փուղ ունենայ, վուր քամու կարմուջնիր շինին. ու էսաւ, էտ պատւներուն էլ չգթնելով. գոնիա Զէյթուն էլ չին գնում, վուր էնդի էրած տիղերուն կինքտալ տան, ու մօզոնին էնենց կացաբաննիր, վուր վուչ կրակը կարենայ ոչնչացնի, վուչ ջուրը տանի։

Էն հարուստնիրու, վուր իրենք ամեն ինչ ունին. ուտում ին, խմում ին, քէփ ին քաշում ու չին մտածում, թէ էնդի էլ հայեր կան, վուր էրեգ էգերա իրենցից լաւ էին ապրում, ու էսօր ամեն բանի կարօտ ին մնացի։ Հարամ ըլի դրանց կերածը. քնթներեմէն դուս գայ, դիփ արին ու դախլ դառնայ, թէ վուր ախպուրը չը յիշին։

Էն տէրտէրների՝ ու ափրո Թիֆլիզցի, Բաքւի, Բաթումի, Կավկասի, Հաշտարխանի, Մոսկով—Պետերբուրխի, Էրևնի ու էն մէկէլ քաղաքներու, վուր հուզուրումը մէնակ գլփիլ ու գձլիլ գիդին գաչաղների հանգի, ու վունց մէ գամ, մէ կապէկ սխկտին չին տալի, ըիրթում բռնածին չին օտկում, որփին չին նայում, Աստծուն չին պաշտում, օչովից չին ամանչում, ամօթից չին քաշւում ու վիրչը ամենիցն էլ՝ հիմի, հիմի էլ, էսօրւան ու էն էլ գատկից եդոյ՝ օչովին չին յիշում։ Բաս էտ անպիտաններն էլ ո՞ւմ համա և «վասն որոյ ևռան/ զուգին ցուցանել» թէ իրենք էլ սա՞ւայ տէրտէր ըլելուց, մարթիք ին։

Էհ, խալխին վուր կոտորում ին, էլ ո՞նց ին հարգաւոր Տէր Ծուղուրն ու Տէր Արսէնը, Տէր Էգնիկն ու Տէր Կիլտիկոսը։

Էն փարժապիտներուն. վուրէս ծանդրը, էս սուք ու շիւան օրիրում էլ փոխանակ, վուր մարթասիրութին սովրացնին աշկիրտներուն, գուլիանէմ ին սարքում ու աչքն էլ հանւում է, զաբար ին անում։

Էն Բարեգործական ընկերութիններու ու իրենց փողբաշի ասկի խնամակալներու վուր տաք տաք տեղիցը մինձ մինձ ին խօսում. սատկած էշ գուզին, վուր նալնիրը պոկին ու իրենց ջէբիցը մանէթ չին ծախսի ախկատ ու զաղակի համա։

Էն խմբագրներուն. ու գրողներուն վուր էս սև օրերին, էս սուք ու շիւանին էլ, իփ վուր քարերն էլ ձէն ին բանդրացնում, սրանք ջէբ ուրախանում էլ ին, վուր էտ թաւուր բանիր է պատահում, վուր իրենք տպում ին ու մէ քանի տասնով, ան հարիր հատ աւել ին ծախում։

Էն խալխին, վուր էս բանիրը լսում է մէ ականջով ու մէկէլ ականջովն էլ դուս է թողնում, կօսիս վունչիչ չէ պատահի։

Ի՞նչի ին հայերուն կոտորում կօսէ։

Ձէր էնդուր վուր, հայը խելուք է ու շնուրքով ու աղաթ է վուր շնուրքով մարթուն ամենքն էլ պէտին տալի, արա մէ տեհէք ձիր ճանանչներուն, ով վուր շնուրքով է, նրան ափրո տալում կուլիք։

Իժում էլ վուր քրիստոնայ ինք, ու էն էլ ամենաառաջինը. ու չունքի Քրիստոս Աստուծն էլ չէ օտկում, մաշ հախն է վուր. Նրա սուփ հաւատը թողնինք, թուրքանանք. հագիր վուր շատ էլ չինք չարչարւի. չունքի միզմեն վուր մէկն է հիմի քրիստոնայ։

Վրա իրրուրդն էլ վուր, ո՞վ ասից վուր մինք ամենքից առաջ քրիստոնեանանք ու հայ էլ մնանք։

Վրայ չուրսն էլ էն վուր՝ ինչի ինք ուրիշնիրուն միղ դնում, մինք միղ քիչ ինք կոտորում. թէկի մինք մէկմէկու կոտորելու իրաւունք ու պրաւայ ունի՞նք, ուրիշնիրը ափրո ունին, չունքի տեհնում ին ու սովրում ին։

Վրայ հինգը էն վուր՝ մինչկլի հիմի մինք մէ օր չալիշ չեկանք քրթին ու մրթին. թուրքին ու պարսկին սաւայ հարևնութինիցը, խնամութին էլ անիլ. մինք ինչի՞ ինք սիրում ռսներուն, չունքի թէ մէ հայ կնիկ ունինք՝ իրիք չուրս էլ ռուս կնանիք ինք պահում։

Վրա վիցը, վրա օխտը, վրա տասը, քանը, ինչքամ գուզիք կօսիմ։

Մնաշ։

Գասպար Կալասուզեանց

---

***

Դու իմ Լէյլու. երեկւայ մոխիրներից
Այսօրն ելաւ թարմ ու զով...
Եւ ահա իրիկնադէմ է...
Օրն անցաւ...
Ի՞նչ ես փնտրում անցեալի մոխիրների մէջ...
Օրն անցաւ...
Եւ վերջալոյսն է ծիրանի պատանքով.
Անցեալները գերեզման դնում։
Խաւարի մէջ օրն է մահիճ մտնում
Եւ իր ննջման հետ վաղւայ արշալոյսը յղանում...
Դէհ, եղ վերջալոյսի նման, մոխր քնոյ տապաստը
Եւ նոր ու ազատ Օրը յղացիր՝
Որպէսզի արշալոյսի հետ թարմ ու կենսաբեր կեանքը երկնես....

Սաֆի

---

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

### ՆԱՄԱԿ ՀՈՌՀՈՌԱՊՕԼԻՑ (Ստամբօլ)

19 ապրիլի

III

Գասպար ջան!

Գլուխս իմս չէ, չեմ գիտում, քաղքից որ դուրս եկայ, գլուխս վրէս մնաց, թէ էս գլուխն ուրիշի է։ Հայելում որ նայում եմ, կարծես իմ գլխիս նման լինի, բայց որ մի քիչ մտածում եմ, կասկածում եմ թէ իմ գլուխն է։

Դուն ինչ կասես, խնդրեմ մեր տանը՝ հարցնես, գլուխս էգտեղ խօ չեմ մոռացել

Ի՞նչ անեմ Գասպար ջան, էն տեսակ բաներ են պատահում, որ խելքի չի կարող մարդս երևակայել։

Շատ անգամներ, կարծում եմ, թէ երազումս եմ ու սուտ է իմ Պօլիս լինելս։ Ինձ մի նամակ գրիր, ի սէր մերև զրերութեան, ճի՞շտ է, որ ես այս տեղ եմ, գուցէ ես այս տեղ չեմ, այլ Թիֆլիզում ու Վերի Ֆոնտապիում լաւ քէփ անելուց ու տաք տաք ճաշեր ասելուց յետոյ, քնել եմ ու էս տեսակ անճոռնի երազներ եմ տեսնում։

Համա էս չափ էլ երազ կլինի՞։ Երկրորդ ամիսն է, էս անտէր Պօլսում եմ, մեղայ Աստծու, Հոռհոռապօլսում եմ ուտում եմ, խմում եմ, խաղում եմ, խաղացնում եմ, լալիս եմ, ծիծաղում եմ, տեսնում եմ, տեսնում եմ ու ջէր մինչև հիմայ էլ, չեմ գիտում՝ ես ես եմ, թէ ես՝ ես չեմ։

Գասպար ջան, դուն ինչ կասես, ես Ես եմ, թէ ես՝ Արշակ Յարութիւնովը չեմ։

Մէ մէկ թէ ասում եմ, թէ ես չեմ, բա ես ո՞վ եմ, ասում եմ։

Փիս...

Արա մէ էգտեղ լաւ տես, գուցէ ես էգտեղ եմ, մեր պեւալած Թիֆլիզում ու էս տեղ մենակ իմ հոգիս է։

Յօ գիտես, հիմայ էնենց ժամանակներ է, որ կարող է պատահել, ես մարմնով էգտեղ լինեմ, իսկ հոգով, գրաֆ Ցէպէլինի հնարած օդապարիկով Հոռհոռապօլ եկած լինեմ։

Գասպար ջան, ինչ ուրախացնեմ. սուլթան Աբդուլ-Համիդին էլ տեսայ, վայ ես գրա մարթ սաղին, ինչ ասեմ. տօ մէ քիթ ունէր, որ Ներիմանովի քիթը սրա մօտ բաղլինջի տօլ կլինէր։ Էս մեծ քիթն էլ իր երեսուն երկու տարի ամեն մուստատ բաներու մէջ կոխում ու խառնում է էլի։

Աչքը հանեցին, թախթիցը վեր դցեցին ու ինչ, երեկւան ճիւաղը Ելդըզից գնալիս՝ տաս թէ ամաչում էր. չէ, էնէնց էր գնում, կասես թէ մեր Սուրէնովը լինէր, որ օչովի համար չի մտածում, մենակ իրա գլուխն ունի ի նկատի ու իրա բարեկամ բազմանչի կամ մածուն ծախողներին։

Սուլթանը առաջն էր տանել տասնումէկ հատ սիրուն կանանց ու օխտը հատ էլ ներքինիներ, ու գլուխը բաշ՝ բօլթա էր տալիս վազգալումը։

Ո՞վքեր էին սրա ներքինիները. ինչ ասեմ, դանա դուն չես գիտում։ Սրանք էլ էն մարդկանցից են, ինչպիսիները մեզանում էլ կան,—հասարակական ասպարէզներում գործող մեր գործիչների մնակլեզներից, գործիչների՝ որոնք այնպէս են վարւում գործերի հետ. ինչպէս Սուլթանն իր կանանց հետ, իսկ ներքինիներն էլ դիտում են և հսկում, որ ոչ ոք չմօտենայ ու արբաղղծէ իրենց պատրոնների սիրելի առարկաները։

Վերցրէք մեր լրագրութիւնները, լրագրողները, մինչև մի-մի սուլթաններ չեն, իսկ էն հլու տակի մասխարաները, որոնք ամեն յիմարութեան գլուխ են խոնարհեցնում, չօռին տյռ են ասում, մինչև ներքինիներ չեն։

Մեր բարեգործական, մեր կուսակցական, մեր կուլտուրական, հոգևոր և վարչական շէֆերն ու վարիչները, հաւատա պակաս սուլթաններ չեն, միայն այն զանազանութեամբ, որ մերոնք մրջիւններ են սուլթան Աբդիւլ-Համիդի առաջ ու սուլթանի գիրքում, իսկ եթէ սրա տեղը լինէին, ով գիտէ, հայ չէ, երկրիս վրէն քուրդ էլ չթողնէին կենդանի։

Գասպար ջան, քամած մածուն ուտում ես։ Սաում են թէ Փիթոյեների պրոմիսլան ուրիշին տւաց, հիմա ինչ պիտի անենք, խիղխլալէն ով գիդա, էլ քաղաք չըներեն, գիծ ռուսէթ ու զագրանիցա ուղարկեն։ Բա դրա համար Դումի մեր պատգամաւորները Սագաթէլյեֆն ու Ջխէիձէն առաջարկութիւն չարին Դումումը, ճնց կլի քաղաքը թողնել առանց խիղխլալի, դօշ ու զուրգելի։

Ամա Փիթոյեների աչքն էլ են հանել, ուհ մուրատներ են ա՛յ, արտխարիք թաարոնում, մեղ որ շաբաթական մէկ օր էլ տալիս են, էն էլ հազար ու մէ մունաթով, գլխները մեռնում է. դրանք էլ հայեր են, հոգեմ դրանց ու դրանց նման սոլոլակցի հարուստների գլխները, որոնք հայութիւնը մենակ ջրօրհնէքի գիշերն են կատարում։

Գասպար ջան, հարցը վճռուած է, սուլթան Աբդիւլ-Համիդին կեանքը բախշեցին։

Նոր սուլթանին տեսնես կը զարմանաս, բոբրոսնած, կեսաի խիարի նման է, մէջքը կռացրած։ Ինձ որ սուլթանութիւն տային, ես չէի ընդունիլ, ինչի որ խիստ փաթերակաւոր բան է, համա սուլթանի հարէմից թէ մէկին տային, գլուխս էլ մատաղ կանէի։

Կալատուզ՛ ինչ կասես, հիմայ որ սուլթանին վեկալնեմ, ու քաղքէ քաղաք ման ածեմ, լաւ խէր կունենամ թէ չէ։

Տեսայ կաթողիկոսին, հարց և բարև արեց, ինչի նամակ չի գրում Գասպարը ասաց։ Տօ մէ իմանաս, թէ էջմիածնի պատուաները օրեկան քանի քանի նամակներ են գրում. մենակ Մեսրոպը, որ սուտ չասեմ, օրեկան 50—60 նամակ է գրում ու իրա գլուխը գովում։

Էլ ինչ գրեմ, ինչ ես կարծում. սուլթանը որ էդ տեղ բերենք, ափրօ լաւ կանենք, թէ Եւրոպա տանենք։

Ե՞րբ պէտք է հաւաքած փողերն ուղարկէք։ Էս օր շալվարս ծախեցի, Ֆռացի անշալվար, ինչ անեմ եղբայր, պօլսեցիք ասում են, մենք քանդւեցինք, ասում են չենք կարող թարոն գալ։

Գիջակով եմ ման գալիս, պալտօն էլ վրէս գցած, էստեղ շատերն են էսպէս։ Նամակ գրիր.

Քո Արշակ Արութինով

Տպելու համար արտագրեց՝

Փօլէտիկոս

## — ● ԴԷՍԻՑ—ԴԷ՞ՆԻՑ ● —

### ԿԱՆԱՆՑ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ

Ամուսինը (կարդում է կնոջը՝ երկրագնդի և մի մոլորակի մէջ պատահող ընդհարման և դրանից առաջանալիք սարսափելի հետևանքների մասին)։—Ի՞նչ կարծիք ունես դու, ա՛յ կին, այս ընդհարման մասին, հ՞ը։

Կինը (սարսափած)—Ա՛խ, տէր Աստւած, ինչ կը լինի, այն ժամանակ, մեր...ամանեղէնի հալը։

### ՏԱՐՕՐԻՆԱԿ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ

Նամիշտ—Ես կարծում եմ, տիրուհի, դուք շատ երջանիկ էք, որ ունէք մի այնպիսի ամուսին, ինչպիսին մեր պարոնն է։

Տիրուհի—Ինչու ես դու այդպէս կարծում։

Նամիշտ—Ա՛խ, տիրուհի, մեր պարոնը ինչ գեղեցիկ տղամարդ է. իսկ երբ նա որևէ մէկին համբուրում է՝, իւր այդ համբուրով ուղղակի վառում է ամբողջովին։

Տիկինը—Իսկ դու ինչից գիտես այդ։

Նամիշտ—Ես... ես... այդպէս ենթադրում եմ։

### ԱՄԵՆԱՃԻՇՏ ՆՇԱՆԸ

—Դուք ինչպէս էք համաձայնւում ապրելու այս խուլ, յետ ընկած անկիւնում։ Ամենայն հաւանականութեամբ այս տեղը անապահով է։

—Ի՞նչ էք ասում դուք էլ. տեսնում էք ոստիկան կայ կանգնած։

—Եւ ինչ կարող է անել մի ոստիկանը։

—Ես հօ չեմ ասում, թէ նա կարող է մի որևէ բան անել, այլ այն, որ եթէ այստեղ գէթ չնչին վտանգ լինէր՝ ապա հաւանական է, որ ոստիկան չը լինէր էլ։

Անեղ Մախաթլըչ

### ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Նորից կեանք առաւ... նորից մոլեգնեց,
Նորից հայ երկիրը սրի տակ դրեց, սուրը շողշողաց, արիւն ծովացաւ, կրակ ու ճարակի՝ հայի տունը տրւեց. հայ կին ու աղջիկ կրքին զոհ գնացին, տար տար գնդակը հայի կուրծքը ցցւեց։

Շէն, քաղաք, աւան, խրճիթ ու տաճար՝ եղաւ խուժանի զրոհի ասպարէզ, հայը ինչ նոխազ՝ քաւութեան անպարտ, կը լինի վառ—ջան մարդկանց փրկութեան։

### ՀԱՐՑ

Բայց այդ՝ միթէ՞ ճիշտ է, Տէր իմ Աստւած։

Ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար հայը ծնւեց, ինչ յանցանք գործեց, ի՞նչ դաւ նա սարքեց, որ մեղկ մարդկութեան գութիցը զրկւեց։

Ո՞ր մեղքի համար նա խաչի գամւեց, ո՛ր սխալի համար եղբօրից լւեց։

### ՊԱՏԱՍԽԱՆ

Անմիաբանութիւնը, եղբայրատեացը, անձնասիրութիւնը եւ անկազմակերպ մեր «ղուլղուլական» կազմակերպութիւնները մեր տունը քանդեց։

Ցաւ տեսնես յաւիտենից ամէն։

### ԱՇՏԱՐԱԿ

Քաւոր Գասպար

Մի նամակ եմ գրում, համա ափսոս խէր խաբար չի։

Օղորմածիկ Պերճը մեռաւ իրա գերեզմանը աշտարակցուն գովելով։ Էս քանի տարում մի քանիսը մի կացան Աշտարակու անունը բարդայ բոյ բարձրացրին ու բղխայն ուրին գեննոմը, գնաց անդունդը։ Գեղը էրկու թայֆի ա բաժանւել, մարդ ա, որ սպանում են մի գլուխ, ախպէրը ախպօրն ա սպանում, տղէն հօրը, հարևանը հարևանին, քուրը ախպօրը, սիրողը սիրականին։

Մեռել են դրդանում, տուն կրում հաւեր յափշտակում, Կարօյին գիւղախորով արին նամարդավարի, էս դառնի քշերն էլ, քաջերը ուրին հեղճ Տէր-Թաթոսին սպանեցին սուլթանի ջգրու, քանի որ սուլթանն էլ հայերին կիլիկիայում ջարդել է տալիս։ Մնում ա որ Ասոօծ էլ սպանենումնց որ ասում են «գնա մի գեղ, տես քոմմա քոռ են, դու էլ աչքերդ կապա», մեր շկօլի վարժապետները էդ առակը դուզ բէ-դուզ կատարեցին։

Սեպտեմբերին էկան թէ չէ, երկու թայֆի բաժանւեցին։ Ամենքը մի մին դաշի փշտօֆ են խրել գօտիները ու կրակի մէջը ծիրանի ծղան են քցըմ։ Մի վարժապետ ժողովրդը իրա փշտօֆը հանել էր, ուզեցել էր իրա ընկօրը խփի մի ախմախ բանի խաթէր։ Վարժապետ էլ սպանւէր, լաւ էր, համա չեղաւ։ Սողոմ-Գոմոր է դառել ինչ ասեմ։

Քաւոր ջան, խօլերի ագրէսը գիմանաս, մի նամակ գրա, թող գայ մեր գեղը բալքի թայֆայականներին ջոկի. մենք էլ պրծնենք էս կրակիցը։

Գրիգօվորի կոպէկն թէգ կգայ։ *)

Քո սանահէր Մարութ

*) Խօլերի թայիր թայիր կայ, լաւը էս սահաթիս Պետերբուրխում է ու խիստ էլ էժան. Հնդստանումը էլ էստուց դժար կը ճարւի, համ էլ թանգ է. դուս գրեցէք Պետերբուրխէմէն նալօժով, ինչպէս դուզիք կուգրգին։

Խմբ.

ეროვნული ბიბლიოთეკა

## ՀՈՂՄԵՐԻ ՈԳԻՆ

*...Եւ մի օր այսպէս խօսեց*
*խելագար քամին։*

I

Աշխարհի տէրը ես եմ ընդարձակ,
Ամենից հզօր, ամենից անյաղթ.
Ես միահեծան տէրն եմ համարձակ,
Աշխարհի տէրը՝ և մահը զւարթ։
Ես յաւիտենական անվախճան եմ, որ
Ամեն բան՝ սկիզբ ու վախճան՝ գտնում է
ինձնով։
Փոթորկին անսանձ՝ մրրիկին սովոր,
Ես շունչ եմ տալիս՝ իմ բարբառներով։

II

Երկինքը նոյն իսկ՝ իմ կամքիս գերի,
Երկիրը ոտքիս տակ կը գալարի,
Ամպերին ինքս եմ օրէնք սահմանում,
Գետերին ուժեղ հոսանք հաղորդում...
Եւ այս ամայի չոր անապատում,
Ձեռք արդարութեան նշոյլն ես փնտրում.
Եւ դու մեղաւոր, մեծ յանցաւոր ես,
Որ ազատութիւն գտնել կը փորձես։
Հողմերը միայն, Հողմերը գիտեն,
Այն մեծ արժէքը վեհ ազատութեան,
Երբ արահետում, նրանք կաշկանդուած՝
Փորձում են պատռել ժայռը քարացած։
Մրրիկ դարձէք ու հողմ շառաչող՝
Եւ դուք կը լինէք՝ անմահ երազող։

Շաւ Արմէն

## ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Կիրակի ապրիլի 19-ին, Բեթխեհէմի ս. Աստուածածին եկեղեցում հրաւիրուած էր երկրորդ ծխական ժողով։

Ներկայ էին ծխականներից շատ քըչերը, բայց և այնպէս, ժողովը համարեա թէ կայացաւ։

Նախագահ ընտրուեց արժ. Տէր Գէորգ Միրաքեան և քարտուղար՝ պ. Գ. Ծանրուդաղեան, որոնք մի այնպիսի շնորհակալութիւն յայտնեցին ընտրողներին՝ կարծես ութ արասանոց գինիով հիւրասիրուեցին։

Ժողովը բացուեց. մի քանի հարկաւոր կէտերի վրայ խօսելուց յետոյ՝ ընտրուեց չորս մարդ, որպէսզի այդ հարկաւոր կէտերը հետազօտեն երրորդ ժողովին ծխականների առաջ պարզելու համար։

Հարց ծագեց մի աւելի անհրաժեշտ բանի համար, թէ ինչ միջոց ձեռք առնեն, որպէսզի երրորդ ժողովին, բոլոր ծխականները ներկայ գտնուեն։

Այդ մասին ծխականներից ամեն մէկն իր կարծիքը յայտնեց։ Մէկն ասաց՝ որ սպառնական նամակներ գըրենք. միւսը թէ՝ ոստիկանութեամբ և այլն և այլն։

Վերջը պարոն երեցփոխը յայտնեց իր կարծիքը, թէ հարկաւոր է նրանց համար մի լաւ ճ ա շ սարքել և խոստացաւ իր սեփական ձախու գրպանից մի փառաւոր ճաշ տալ բոլոր ծխականներին։

«Մենիւն» կազմուեց։

Ի գիտութիւն պ. պ. ծխականների յայտնում ենք, որ երրորդ ժողովը սկսելու է առ. ժամը 9-ին, իսկ ծըխականները պէտք է ներկայ լինեն առ. ժամը 7-ից, որովհետև նախ քան ժողով սկսելը, ծխականներին կը տրուի մի-մի բաժակ ճաճի արաղ և լաւ խաշ, իսկ ժողովը վերջանալուց յետոյ եկեղեցու գաւթում լաւ ճաշ, հետեեալ կարգով- 1), գառան չխրթմա և 2) գառան ժարկոյ. դօշ, զուրդէլ, ժիտկա, սարղինկա, թազա պանիր, տարխուն, խիար, կարմիր ձու և այլն ինքատինքեան կը լինի. իսկ եթէ պ. պ. ծըխականները լաւ կոնծարանելուց յետոյ, կը ցանկանան քաղցր դուդուկ կամ սազանդար, այս էլ խոստանում են նոյն եկեղեցու քահանաները իրենց հաշուով։

Օօխար

## ՕՐԻՆԱԳՐՔՆԵՐԻՑ

### ՊՐՕԿՈՒՐՕՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Քո մերժումով, օրիորդ, իմ կեանքս թունաւորեցիր,
(Պատժ ագրքի յօդ. 1453, կէտ 5-րդ)

Կանխապէս իմ սիրտը գողանալով
(Պատժ. յօդ. 169)

Ծաղրական խօսքով ինձ վիրաւորեցիր,
(Պատժ. յօդ. 130)

Քաղաքավարութեան օրէնքները ոտքի տակ տուիր
(Պատժ. յօդ. 43)

Բայց ես չեմ ների հասցրածդ վէրքերը
(Պատժ. 1477 յօդ.)

Ոչ էլ թոյլ կը տամ, որ պատիժս դիպչես
(Պատժ. յօդուած 134)

Եւ քեզ, ինձ այդպէս խաբելուդ համար՝
(Պատժ. 173)

Կը ստիպեմ ցը մահ օրիորդ մնալ։
(Պատժ. յօդ. 19)

Թարգմ. Կօզօզ

## ԼՈՒՐԵՐ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Տեղիս ոստիկանութիւնը գիշերները «աւեստիս» է ման գալիս քաղաքիս բնակիչների տները. Մելքոն, Գասպար և Բաղդասարներին «почетный караулъ»-ով հիւր են տանում իրանց մօտ։

—

Տեղիս հոգաբարձութիւնը, չը ցանկանալով իր ուսուցչական խմբի մէջ ունենալ լրագրում և մանաւանդ «Խաթաբալա»-ում գրող ուսուցիչներ՝ այժմեանից որոշել է եկող տարուայ համար այնպիսի ուսուցիչներ հրաւիրել, որ իսկի գրել չիմանան. (անգրագէտ) բացառութիւն կը լինի մի միայն հոգաբարձութեան պնակալէզ և սուտխօս լրտեսների համար։

Ասեղ Մախաթովիչ

## ՊՕԼՍԻՑ

### ԴԵՐԱՍԱՆ ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ԽԱԽԱՄԱՊԵՏ

Յարութիւնեան-Զարիֆեան-Մայսուրեանի խումբը Պօլսում, ներկայացրել է ի միջի այլոց Գուցկովի «Ուրիէլ-Ակօստա» պիէսը, որտեղ ներկայ են եղել և մեծ թւով հրէաներ։

Հրէայ հասարակութեան անդամները այլև խախամները անչափ հաւանել են Յարութիւնեանին Բէն-Ակիբայի դերում. ուստի և դիմել են անձամբ՝ պ Արշակ Յարութիւնեանին և խնդրել՝ իր քէչաուփը դնել խախամապետութեան պաշտօնի համար։

Արշակ Յարութիւնեանի խախամապետութիւնը 90°/o ապահովուած է։

Արժանահաւատ և սանոտրակ աղբիւրներից լսում ենք, որ Արշակ Յարութիւնեանը գերադասում է Պօլսում հրէից խախամապետ լինել, քան թէ Թիֆլիզում հայ դերասան։

## ԴԵՐԲԷՆԴԻ ՑԱՒԵՐԻՑ

Աղա Կալատուզեան!

Այ ջանըմ, էս ինչ տեսակի խառնաշփոթներ կան մեր հայերիս մէջ, իսկ որ դարմանալի. Զատկի կիրակին էստեղի եկեղեցու բակում կարծես հարսանիք լինէր. 12 ոչխար էին մորթել. մի հարցնող լինի՝ ինչու, ախր ինչի՞ համար, է. լաւ, ասենք մատաղ էք անում, ձեր ասելով «հոգուպարար» էք կատարում, չէ՞ր լինի շատ-շատ 2 ոչխար մորթել. կաթսաներով շիլափլաւ են եփել ու բաժանում են. 150 մանեթի չափ փող է ծախսել. իսկ եթէ ասես դպրոցում գրատախտակ է պակասում, քարտեզներ ու գլօբուս, նկարներ ու մանկական գրքեր չը կան և կամ դասարանները ցուրտ են, ճ, բերան չբանաս, թէ չէ... ինչպէս կարելի

ეროვნული ბიბლიოთეკა

է. մատաղն ու գդլոց, համեմատել կարելի է։

Բա չէք ասում էստեղ մեռնելն էլ է խաթա. ով ախպեր է, վայ նրան, չպիտի մեռնի, թէ չէ, գաղաղի մէջ էլ ամօթից կը կարմրի. սովորութիւն է, մեռելատէրը գերեզմանոցում պիտի մեռելահաց—ճաշ տայ, հոգ չէ, թէ նա պարտքի տակ կընկնի, բա ուրիշները ինչո՞ւ են տալիս, բա ինչի՞ համար է շինուած էն հիանալի սեղանատուն կոչւող վիթխարի շէնքը։ Դեռ էդ չէ. հապա եօթնօրեայ ամբիծը, հապա քառասունքը, հապա տարելիցը, էլ չգիտեմ ինչը. Թարսի պէս էլ մեր հասարակութիւնը շատ «ակուրատնի» է մեռելին յարգանք մատուցանելու մէջ։

Չէ, աղա Կալատուզեան, մարիս դրել եմ էս տեղ չմեռնել. թէև մէկ ոտս էն աշխարհումն է. բայց չեմ ուզում կնկաս ու երեխէքիս պարտքի տակ գցել։

Մէշէդի

## ՏԷՐՏԷՐԸ ՎՃԱՐՈՒՄ Է ԻՒՐ ՊԱՐՏՔԸ

Անտօն.—Տէրտէր ջան, պատիկն էլ անցաւ, տուն օրհնեցիր, գերեզման օրհնեցիր. բօլ-բօլ հարուստ մեռելներ թաղեցիր, հիմա քո փողի ջահել ժամանակ է, պարտքդ տուր։

Տէրտ.—Այ որդի, ես վաղուց է, իմ պարտքի դիմաց գրել եմ վճարած. ինչու դու չես գրել «ստացած»։

Անտօն.—Ի՞նչպէս գրեմ ստացած, Տէրտէր ջան, քանի որ չեմ ստացել։

Տէրտ.—Այ որդի, մինույն հաշիւն է, դու իմ ծուխն ես. ասենք թէ հիմայ դու մեռել ես. կարգ կատարելու, թաղումից փողը հաշւիր, ճիշտ կ'լինի այնքան, որքան, պարտ եմ քեզ, դեռ մի բան էլ օրհնած, դու ես մնում պարտ։

Անտօն.—Ի՞նչ բան տէրտէր ջան։

Տէրտ.—Բա տիրացուներին, բա էջմիածնի, բա հոգէբաժնի...

Լեւոն Մակինսկի

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

(Պիէս կէս արարւածով)

Մասնակցում է ամբողջ խմբ. կազմը

Խմբագիր.—Պարոններ, մենք այսօր հաւաքւել ենք այստեղ ջոկելու գաւառից ստացւած նիւթերը, թէ որը պէտք է տպագրուի, որը ոչ։

Ես պարոններ, մէկ մէկ կը բանամ ծրարները, ու կը կարդամ, իսկ դուք ուշադրութեամբ լսելուց յետոյ, կը յայտնէք ձեր կարծիքները։

Ես կարդում եմ Լաւգրողեանցի յօդւածը. Նրա յօդւածները ես շատ եմ հաւանում. որովհետև այդ պարոնի յօդւածների մէջ ես գտնում եմ, թէ ճշմարտութիւն և թէ անկողմնապահութիւն։

Նախանձողեանց.—Պարոն խմբագիր. ես այդ պարոնի յօդւածների վրայ մի քիչ կասկածում եմ, որովհետև նրան ես շատ լաւ եմ ճանաչում, մի հարբեցող բանւորէ, կեղտոտ շորերով. ոչ մի ուսում չունի. ես կարծում եմ, որ դա օգտւում է ուրիշի գրւածքներից իր ստորագրութիւնը տակը դնելով և մանաւանդ տեսում եմ այդ ստորագրութիւնը։

Ուստի ես կը խնդրէի թողնել դրա յօդւածը պարոն խմբագիր, և մի ուրիշը կարդալ։

Կեղծաւորեանց.—Ես էլ նոյնը կասէի, պարոն խմբագիր, ինչ որ ասաց պարոն Նախանձողեանցը, բացի դրանից, չի էլ սազում, մինույն թերթում, ուր աշխատակցում է մի պարոն, ինչպիսին է մեր աշխատակից յայտնի Նախանձողեանցը, տպագրել և մի հասարակ մարդու յօդւած, որքան էլ նա լաւը լինի։

Խմբագիր.—Շատ լաւ. ես կարդում եմ պ. X-ի յօդւածը, որ ներկայ ժամանակի ոգին այնպէս է պատկերացնում ու մարդկանց կեղտերը երեւան հանում, որ կարծես ամեն մի կարդացող իր դէմքը տեսնում է հայելու մէջ։

Տողավարձեանց.—Ոչ պարոն խմբագիր, դրա յօդւածների պատճառով մեր թերթը քիչ է դուրս գնում, որովհետև ընթերցողները չեն սիրում իրենց արատքը թերթերումն էլ կարդալ, քանի որ տանից այդ էլ իրենք իրենց լաւ են ճանաչում։ Իսկ իմ յօդւածները ես կը հաստատեմ, որ մեծ հետաքրքրութեամբ են կարդում, առհասարակ ընթերցողները սիրում են, երբ յօդւածագիրը հայհոյում է մի ուրիշ յօդւածագրի, կամ քննադատում մի որևիցէ հեղինակութիւն։

Խմբագիր.—Ինչպէս տեսնում եմ, պարոններ, դուք այս բոլոր նիւթերի համար էլ մէկ մէկ բան պէտք է հնարէք, որպէսզի ձեր յօդւածների համար վականսիա բացւի։ Իսկ ձեր յօդւածների համար, ես ամեն օր նախատինքներ եմ ստանում։ դուք ձեր յօդւածներով ու հայհոյանքներով ուղղակի ձանձրացրիք հասարակութեանը։

Պարոն Տողավարձեանց, ձեր յօդւածը շատ երկար է, չի տպագրուի։ Ժողովը համարում եմ փակւած։

Օսկար



## 1000 ՌՈՒԲԼԻ

ԵՒ

ՍԵԿՐԵՏՆԻ ՊԱՐՈՎԱԿԻՐ ՊԱՐՈՆ ՔԵԱՍՊԱՐ ԿԱԼԱՏՈՒԶՕՎԻՆ

Շամախեցի Գեօզալ Աղաբաջիից

ՌԱՊՕՐՏ

Ահա օր տասւստը, սահաթի իննին մեր շուշաբանդըմը նստած քոյնայ գեօշագս թազըրի ի տամ, նոր իրեւս ի քաշըմ։ Մին ալ տեսայ երկու կնիգ, շլապները կլխներին տիրած, ուսալը իրեանքրին քաշած, քիթ-պօշը պուդրով ներկած՝ ներս մտան։ Ես հեանց իմացայ քի խնամիխօս ան եկալ.

«Համեցէք», ասեցի ես, և ներս մտայ օթաղ, տալոնչս ախչիգան ասեցի. «շուտ արա, սարքւի, իշչի ան կեամ, քեզ լեաւ պահի, ծանդր կաննի, բեալքամ սա Համբացմանին փակւիս»։

## ՖԵԼԻԷՑՕՆ

### ԱՆՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Օդեսսա քաղաքի անտաէր՝ յառաջադիմական Տարականովը, որի մօտ գտնւել էր բրօշիւրներ և զանազան ցուցակներ և պէտք է երեք ամիս բանդ նստէր, ազատւեց շնորհիւ իսկական ռուս մարդկանց շարքը մանելուն և ձայնաւորի թեկնածութիւնից հրաժարւելուն։ Մի քանի յառաջադիմական թեկնածուների գեն. Տօլմաչովը կանչել է իր մօտ և խիստ հրաման է տւել, հրաժարւելու ձայնաւոր ընտրւելուց։

—

—Դո՞ւք էք Տարականովը, բարկացած հարցրեց գեներալը։

—Ես եմ, ձերդ գերազանցութիւն, պատասխանեց Տարականովը։

—Լաւ էք, խօսք չկայ, գլուխը շարժեց գեներալը։

Տարականովն ուրախ գլուխ խոնարհեց։

—Լաւ էք, խօսք չունիմ, աղաղակեց գեներալը։

Տարականովը տխրեց։

—Համարձակւում եմ...

—Դուք համարձակւում էք, պ. Տարականով, այդ ձիւ ձեզ համօզեց քւէարկւելու ձայնաւորի պաշտօնին։

—Ես իրաւունք ունիմ...

—Տարականո՛վ, դուք չպէտք է ձայնաւոր լինէք։

—Ինչո՞ւ, ձերդ գերազանցութիւն։

—Լաւ չէ, այդ ինչպէս կարելի է, Տարականով—և յանկարծ ձայնաւոր, ոչ, դուք չէք կարող ձայնաւոր լինել։

—Բայց օրէնքով...

Գեներալի կրակոտ, աշխոյժ աչքերը յանկարծ մթագնեցին։

Երկու շլապաւոր կնանիքը մտան ներս։

—Բարև, դո՞ւք էք Գէօզալ Աղաբաջին,—հարցրեցին նրանք ցէք տալով,

—Հա, ես ամ, նստեցէք, հի՞նչ դուլուղ ունէք։

—Մենք ուղարկուած ենք Բաքուի տիկիններից, մենք Բաքուի հայ կանանց ներկայացուցիչներն ենք։

—Շատ ուրախ ամ, աչքիս վերայ տեղ ունէք, նստեցէք դաֆա շինամ խմեցէք, Շամախիան իմ քիւր Գիւրթպիւրթանց Շոգին, լեաւ գիւմաշի դէյմաղ ա խրկալ։

—Շնորհակալ ենք, յարգելի Գէօզալ Աղաբաջի. մենք պարտաւոր ենք, նախ մեզ վրայ դրած պարտականութիւնը, միխան կատարել, ապա ձեր սուրճը խմել, բայց լաւ կը լինէր, որ ծանօթանայինք, մի քիչ բարեկամաբար խօսէինք։

—Աջաբ ա՛լ ասըմ էս՝ ծանօթանանք, ես Գէօզալ Աղաբաջին ամ, շամախեցի, սանահաթըս մամաթուն (ակուշերկա), ինքս «Թաթարալա» մեծ կուսակցութեան անթամ ամ, Բեսսարաբ Կալատուզովը մեր կոմիտէին ա, իննատասն տարական կնիկ ամ, աշխարքի տակն ալ, կլօխն ալ տեսած կամ։ Դէ, հիմի ասացէք տեսնամ, դի՞ւք հով էք։

—Շատ ուրախ ենք,—ասեցին երկուսը մին տեղ ցէք տալով հետները.—տիկին Շլլապաւորեանց. տիկին Լօքլօքեանց։

Ես ալ ցէք ցէքի ուխ։ Նրանք նստեցին։

—Գիտէ՞ք, Գէօզալ-Աղաբաջի, անցեալ տարի ինչ որ Գեատիգորսկի տեսել էք, բոլորը գրել էք «Թաթարալին», կանանց սեկցիաները հրապարակ էք բերել, մեզ խայտառակել էք, որ մենք ուրիշ ազգերի հետ Կիսլավոդսկի քէֆ ենք անում, մեր ամուսիններին թողնում ենք, բժիշկներին կաշառ ենք խոստանում, մեր ծանօթ երիտասարդների վրայ նամակներ ենք գրում և այլ հազար ու մի տեսակ լուրեր։

—Եանի սուտ ամ կիրալ...

—Չէ, Գէօզալ-Աղաբաջի, քաւ լիցի, դուք սուտ սաղ գրող չէք, բայց ժամանակը այնպէս է, որ ամեն բան ուղիղ գրել չէ կարելի, ախր չէ՞ որ մենք իգական սեռի միատեսակ անդամներ ենք, քո նամուսը մերն է, մեր նամուսը քոնը, ախր կանանց խայտառակելով, խայտառակում էք և ձեզ, չէ՞ որ դուք էլ կին էք. իգական սեռի պատկանող և ձեր գրելով, մեր սեռին ստորացնում էք արական սեռի առաջ։

Ա կնանիք,—ասեցի ես.—հեսար պեանը կլխի ընգա, համմա իգական և արական խօսքերը չի հասկացայ, հայերան ասեցէք տեսնամ հի՞նչ ա։

Իգական անւանում են կանանց սեռին—օրինակ կին, աղջիկ—դրանք իգական են, իսկ արական՝ մարդ, տղայ։

Այժմ մենք Բաքուի բազմաթիւ կանանց մի խմբի կողմից ձեզ նուէր ենք բերել, համեցէք, այս համեստ լուման վերցրէք, միայն խնդրում ենք, որ այս ամառը Գեատիգորսկի, Կիսլավոդսկի Եսենտուկ և Ժելեզնավոդսկի դաչ չգաք։ Գնացէք Ղարաբաղի, Շամախու, Զանգեզուրի, Նուխիի գիւղերը, այնտեղ շատ լաւ ամառն է լի-

—Ի՞նչ...

—Օրէնքով, ձերդ գերազանցութիւն։

Գեներալը ուսերը շարժեց.

—Չեմ հասկանում։ Ոչինչ չեմ հասկանում։ Ի՞նչ

—Օրէնքով։ Օրէնքը, ձերդ գերազանցութիւն։

—Այդպէս։ Բայց և այնպէս, դուք ձայնաւոր չէք լինել։

—Բայց, օրէ...

—Սիդորով, Սապունենկօ. կանչեց գեներալը։

Երբ Սիդորովը և Սապունենկոն մտան, գեներալը բարութեամբ հարցրեց Տարականովին.

Այդպէս ուրեմն, դուք կամենում էք ձայնաւոր լինել։

—Ոչ, ձերդ գերազանցութիւն, չեմ ցանկանում, ի՞նչ կայ ձայնաւորութեան մէջ... միայն փառք՝—որ ձայնաւոր եմ, էապէս—մեռած անձնաւորութիւն։

—Ուրախ եմ, ձեզ համար, Տարականով։ Գնացէք Տարականով։

* * *

Միւս օրը Տարականովին նորից կանչեցին։

—Տարականով, ես վախենում եմ, որ ձեր հոգու խորքում, դուք դարձեալ կամենում էք ձայնաւոր լինել։

Տարականովը շփոթուեց։

—Աստուած է վկայ, որ չեմ կամենում։

—Հապա, լաւ նայիր աչքերիս... ի հարկէ, կամենում էք։

Գեներալը մօտեցաւ պատուհանին, մատներով թրխկթրխկացրեց և նորից դարձաւ դէպի տանտէրը։

—Այ ինչ... չէ՞իք կամենալ գրուել իսկական ռուս մարդկանց միութեան մէջ, ի՞նչ կասէք։

—Չեմ կամենում, ձերդ գերազանցութիւն։

—Բայց, գուցէ ցանկանայիք գրուել։

—Ոչ... ոչ մի բան ինձ չէ գրաւում,

—Բայց և այնպէս գրուեցէք։

—Շնորհակալ եմ, բայց...

—Չէք կամենում, ափսոս։ Սապունենկօ, Սիդորով...

—Բայց որտե՞ղ պէտք է գրուել, հարցրեց Տարականովը։ Ես կարծում եմ այսօր դեռ ևս կարելի է հասնել։

Գեներալը նրան հանգստացրեց.

—Կը հասնէք։

* * *

Մէկ էլ կանչեցին Տարականովին։

—Ասում են ձեր կինը կաղ է։

—Ցաւում է, ձերդ գերազանցութիւն

—Վատ է որ յարում է, իսկ դուք մտադիր չէք նրանից բաժանուելու։

—Ոչ, ինչո՞ւ, ես նրան սիրում եմ, ձերդ գերազանցութիւն։

—Բայց թերևս բաժանուէ՞ք։

—Մենք տասն և հինգ տարի է...

—Սիդորով, Սապու...

—Իսկապէս ես բաժանուելուն դէմ չէի լինիլ, բայց առիթ չկայ, ձերդ գերազանցութիւն։

—Ի՞նչ առիթ։

—Օրէնքով։

Գեներալի աչքերը դարձեալ մթնեցին։

—Ինչպէ՞ս...

—Այսպիսի կանոն կայ, Lex... ինչպէս ասում են։

—Անցագիրդ մօտդ է։

—Այո, ձերդ գերազանցութիւն։

Գեներալը առաւ անցագիրը, շրջեց, ջնջեց «ամուսնացած» խօսքը և վերևից գրեց «ամուրի»։

—Տեսա՞ք, ինչպէս հեշտ է։ Նրան ասացէք, որ հէնց այսօր հեռանայ ձեզանից, թող այսուհետև ում կամենայ յարի։

* * *

—Տարականով, դուք ինձ չէք ուրախացնում, ամեն ինչ լաւ է, և ձայնաւոր քուէարկելուց ազատուեցիք, և կնոջից բաժանուեցիք, և իսկական ռուս մարդկանց միութեան անդամ գրուեցիք, բայց և այնպէս, ինչ որ մի բան ձեզ պակասում է։

Թուլացած, դալկացած Տարականովը ձեռքերը թափահարեց.

—Ի՞նչ է պակաս, ձերդ գերազանցութիւն։

—Մորուք։

—Մո...րո՞ւք։

—Այո, մորուք, էլ դուք ինչպիսի «իսկական ռուս մարդ» էք, երբ ձեր երեսը ածիլած է...

Ես կը թողնեմ, մրթմջաց Տարականովը։

—Վաղն եթ, ասաց գեներալը։

Տարականովը վախից գունատուեց։

—Ի՞նչպէս թէ վաղը։

—Այդպէս, այսօր չորեքշաբթի է, իսկ վաղը հինգշաբթի։ Ուրեմն հինգշաբթի օրը դու մորուք ունենաս... թքով, սոսինձով, ինչով կամենաս, ես ոչ ոքի երբէք չեմ նեղացրել։

—Բայց բնութեան օրէնքով...

Գեներալի աշխոյժ աչքերը մթնեցին։

—Ինչպէ՞ս... Սատա...

—Վաղը երեկոյեան կարելի է, շտապով հարցրեց Տարականովը։

—Հմ... երեկոյեա՞ն, կարելի է։

—Ես...

Ես կրկնում եմ, ոչ ոքի ազատութիւնից չեմ զրկում։ Գնացէք Տարականով։

* * *

Օդեսայի լրագրներից.

Կառավարութեան կարգադրութիւնները չկատարելու պատճառով, Օդեսայի անատէր Տարականովը, աքսորւում է Օդեսայի սահմաններից դուրս՝ պահպանողական կանոնների գործունէութեան ամբողջ ընթացքում։

Պէչից—Հաշ.

նում։

Տիկին Շլլթուռղեանցը մին կանուերտ տիրաւ առաջիս, իսկ տիկին Լօքլօքեանցը կանուերտը առաջաս վերկալաւ տուաւ ցէքս։ Ես կանուերտը պեացեցի, մէջան հանեցի մեծ-մեծ թուղթ փողեր, վերան 100 մանէթ կիրած, համրրեցի տասը հարիւր մանէթ էրուես խէյլըղ ֆիքերի քինացի, մուկըմ տաեցի ազանում տակող անում, մին լեաւ ալ բիարուս, լեաւ չի, ազանում խօսք տամ քի լեաւ, ալ կնանիքռնց քէֆին չամ կպչիլ, ալի լեաւ չի։ Ֆիքր արի, ֆիքր արի, տաեցի, ինձ 10 օր ռուխսաթ տուր մտածամ, տեսնամ հինչ ֆիքր կանամ։

—Գէօզալ-Աղաբաջի, ասեց Շլլթուռղեանցը, ամեն տարի քեզ պենցիա կը տանք հազար բուբլի. դու մեր սեկրետը մի բանցիլ, մենք էլ ցանկութիւն ունենք աշխարքի բարիքը վայելելու։

—Գեօզալ-Աղաբաջի,—ասեց Լօքլօքեանցը այս խոստակցութիւնը մեր մէջ մնայ, դա սեկրետ է, ոչ ոքի չի ասէք. ես ձեզ համար մի լաւ հագուստ նուէր կը տամ։

—Արխէյին մնացեք. 10-ը օրան ետով կը կեաք վերջին խօսքս կասամ ձեզ։

Տրանք վեր կացան, ցէքս պաչեցին քինացին։

Հիմի, ախպերացու Թեատպար Կալաատուզով. հազար մանէթ ուրշֆաթը ցէքիս ա, հինչ ես ասըմ, ծիտի փուշտով խրկամ քու կարգադրութեան, ետխասնում ունեբռձը կամ քինա, կամ նրանք կեալիս հինչ ասամ։

Սպասում ամ քու կարգադրութեան. անպեշով պատասխանի։ Շատ խնթրըմ ամ ուրիշի չի ասես*)

Մնամ քու քիւրացու՝

Գեօզալ-Աղաբաջի

## ՍԱՖԻՐԻ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐԻՑ

Երիտասարդական հասակում մենք բոլորին հաւատում ենք, բայց մեզ ոչ ոք չի հաւատում. ծերութեան հասակում մեզ բոլորն էլ հաւատում են, բայց մենք ոչ ոքի չենք հաւատում։

—

Մարդն իր ամբողջ կեանքն անցնում է հէնց միայն նրանով, որ պարտք է վերցնում ապագայից՝ ներկային վճարելու համար։

—

Երիտասարդ ժամանակ ախորժակ ունենում ենք, բայց ուտելու մի բան չենք ունենում. իսկ ծերութեան ժամանակ, ուտելու բան ունենում ենք, բայց զրկւած ենք լինում ախորժակից։

—

Իւրաքանչիւր վայրկեան մարդ է մեռնում, իւրաքանչիւր վայրկեան էլ մարդ է ծնւում. հաւասարակշռութիւնը այսպիսով չէր խախտւի, եթէ տռանձին հանգամանքներ չլինէին։ Ո՞վ կարող է երաշխաւորել, որ այն վայրկեանին, երբ մեռնում է մի գեղեցիկ աղջիկ՝ չի ծնւում մի այլանդակը. կամ այն վայրկեանին, երբ մեռնում է մի խելօք մարդ՝ չի ծնւում մի յիմար։

—

Ամենքին էլ մահից յետոյ գովաբանում են, ճիշտ այնպէս, ինչպէս ամենավատ ծառային անգամ արձակելիս, լաւ վկայական են տալիս նրան, ուրախանալով որ նրանից ազատւում են։

—

Մարդկանց ճանաչելու համար, պէտք է նրանց հետ գործ ունենալ, նրանց սիրելու համար, պէտք է նրանց բարիք անել, բայց նրանց յարգելու համար՝ պէտք է նրանցից հեռու կենալ։

—

Պիւթագորասը միս չէր գործ ածում (կերակրի մէջ), որովհետև հաւատում էր հոգիների տեղափոխութեան և ենթադրում էր, որ ամեն մի կենդանու մէջ, կարող էր մարդկային հոգի թագնւած լինել։ Ես կարծում եմ, որ եթէ կենդանիներն էլ ունենային իրենց Պիւթագորասը՝ նա էլ մարդու միս չէր ուտիլ, որովհետև իւրաքանչիւր մի մարդու մէջ էլ, կարող է մի կենդանի պահւած լինել։

—

Աշխարհս մեծ մարդկանց գնահատում է միայն այն ժամանակ, երբ նրանց թաղում է, իսկ նրանց արձանները գնահատում է այն ժամանակ, երբ պեղում են։

Սեբղ Մախաթեր


PARFUM CORDIALE № 4711

ԳԹԻԽԻ «ԿՕՐԴԻԱԼ»

Նորագոյն մօդային զուխի, հոտի հրաշալի և ամուր լինելու պատճառով չունի իր նմանը։

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ

Քէօլն Ռայնի վրայ

Նորին Կայսերական Բարձրութեան մատակարար.

Ծախւում է ամեն տեղ

Ферд. Мюльгенсъ

Кельнъ н|Рейнѣ. отд. въ Ригѣ.


***

Լուռ է ամեն ինչ... ծառերն են միայն
Խուլ ամայութեան մէջ մեղմիկ շընչում.
Իսկ երկրի վրայ իւր թեւերը լայն
Մահն է տարածել ու լիճ է կանչում։

Տխուր է հոգիս... Դորա խորքերում
Սեւ մտքերն. ինչպէս ալիքներ ծովի,
Իրար են անցնում, յուզւում փրփրում
Ու ծծում հիւթը իմ ծաղիկ կեանքի։

Խորին լռութիւն... աստղերը պայծառ,
Ինչպէս որ կոյսի գրաւիչ աչեր՝
Նայում են սրտիս վէրքերին տկար՝
Ու հանգստացնում իմ մռայլ խոհեր։

Փայլակ Արշակունի

## ԳՐՕՖԷՍՍԻԱ

Հասա գրպանի տէր մի բանկիր, գնաց իւր մի ծանօթ հրատարակչի մօտ, որը մի «Հասա» ամսագիր էր հրատարակում։

—Ո՞ւմ եմ պարտական այն պատւի համար, որ արժանացրել էք ձեզ տեսնելու.—այս խօսքերով է դիմաւորում նրան հրատարակիչը։

Գիտէք, ես ունեմ մի աւարակ որդի, որը ոչ մի բանի ընդունակ չէ...

—Ա՛,—գլխի ընկաւ հրատարակիչը.—դուք ուզում էք նրան հրատարակիչ դարձնել. շատ գեղեցիկ, հէնց առաջին անգամից մենք նրան կը յանձնենք մատենախօսական բաժինը։

## ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Լսիր, մեր խորհուրդը, ճիւ երիտասարդ, և բախտաւոր կը լինես.—ճկուն, միշտ խոր ողջունիր, սաիր, սողա ամբողջ ժամանակ. լակէյութեան ճանապարհով գնալով շատերն են մարդ դառնում... զուր չէ, որ մենք լակէյին էլ «մարդ» («человѣкъ») ենք ասում։

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Բարսում գիւղի տանուտէրին.—Է՜հ, տարեկան քանի ջէր ես խարջը հաւաքում։ Թէ էլի քեզ վերայ բողոք տաացանք, գիրամալա կը նկարել տամ քեզ։ Խելօք կաց։

Գանձակ.—Սիմօնին

«Очки рубль, тузъ да тузъ.
«Ցեստոյ կերթաս տուն խիստ կուզ.
«Գիշեր չես քնի մինչի լուս
«Կուտես փթած ճիճւոտ թուզ։

Հրաշալի ոտանաւոր է, զարմանալի է, թէ ինչպէս էլ յաջողել է ձեզ գրել. շատ ափսոս է այդ հնաշխարհիկ ոտանաւորը կիսատ մնայ, պածալ-պաստայ, հետեւեալ բառերի վերայ էլ տողեր բանաստեղծէք. «դուզ» «ընկուզ», «կարտուզ», «արբուզ»։

---

*) Էսա բանը օչովին չիմ ասի, մաղքամ չիմ կանայ քեզ. աղեկ քեր ջան, մէ քիարուստ վեզավուր էլս չանի. փուղ վուր տալիս են, ի՞նչ կոնինք փուղը. փուղը ի՞նչ էլ հուղուրումը՝ հող է ու երկու իրիք արչին հողն էլ մարթաւս հերիք է. մէկ էլ, ու վրայ էրկուսն էլ էն վուր. դուն էանեցութինով խօ մեր պարտիզին աղվայ արիր, մենք հարիր միլիոնով կոչառք չենք վէկալնի, ուր մընաց թէ հարիր թուման, մարթս անում պիտի ունենայ, անումը վուր չկայ, փուղ ինչըղամ զուզիս քիլի, մէ գրօշ չամէ.

Ամա չունքի իմացել իմ, վուր բաքուէլցի աղամարթիքն էլ մէ բան չին, էսու համա էլ իս կարծում իմ (տես թէ վունց պօլիտիկուրի զուս էկաւ) վուր կնանիքն էլ ալքն ին հանում իրենց մարթկերանց։ Ու էս քեզ գրում իմ էննց. դուն էլ օչովին չասիս։

Գաս. Գալաստագեանց



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՓԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿ ԽԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

1888

## ՓՈՔՐԻԿ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմաստուն մարդը երեք յատկութիւն պէտք է ունենայ. նա պէտք է ինքն անէ այն, ինչ որ խորհուրդ է տալիս անելու ուրիշներին. երբէք չպէտք է արդարութեան դէմ գնայ և համբերութեամբ պէտք է տանի իր շրջապատողների թերութիւնները։

—

Մարդ իր բաղդաւորութիւնը գտնում է ուրիշներին օգնելու մէջ։

—

Սխալվելու համար, բաւական է միայն մարդ լինել. իսկ սխալի մէջ յամառելու համար, պէտք է մարդուց ցած լինել։

—

Միշտ քննէք ձեզ և ուրիշներին դատապարտելուց առաջ, մտածէք ձեզ ուղղելու մասին։

***

— Ճի՞շտ է, որ Սմբատ Շահազիզի մահւան պատճառ դարձան... իր փողերը։

— Ասում են այդպէս է։

— Ուրեմն մեր գրողների ճակատագիրն է մեռնել, ոչ միայն փող չունենալուց, այլև ունենալուց։

Դ. Ն. Լ.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ



Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի սպառեն իրենց անլի վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ

№ — 10 ՀԱՏԸ

5 Կ.



Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатня „Дзмоба" Московская ул. № 5.





Պ. ՀՐԱՆԴԸ
(Հեղինակ «Ճեմարանը Բերբերեանի օրով» բրոշիւրի)



### ԳԱՐՆԱՆ ՅՈՅԶԵՐ

Օրիորդը.—Չէ, չէ... ձեռք քաշէք ի սէր Աստծոյ։ Ես չեմ հաւատում մարդկանց, տղամարդիկ խիստ շուտ են մոռանում իրենց խոստումները։

Պարոնը.—Բայց, բայց սիրելիս... դու անխիղճ ես դէպի մեզ, ով է քեզ խանգարում մեր խոստումները միշտ յիշեցնել մեզ։

### ԲԱԳԻՈՒՄ

—Ա՜յ կնիկ, իմացել ես. պատերազմի հոտ է փչում։

—Ուրեմն մեր ակցիաները պէտք է էլի գինը կորցնե՞ն։

—Ի հարկէ որ...

Բա աներս քանդւում է էլի։

## ԱՇՏԱՐԱԿՈՒՄ



1902 թւից յետոյ բուն է դրել դեր և իր հունձն է անում—յանուն գաղափի

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ



վիմագր. Գ. Բիւստերդիկի

Դերասանուհի Լ. Եաւօրսկայեան հեռանում է Թիֆլիսից, որտեղ ներկայացումներ էր տալիս Վրաց ազնուականների թատրոնում.